



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

14550

891.99  
7-28

2003

09  
ՀԱ. 542-3  
Հ-28

ՆԱՄԱԼԵԱՆ

# ՀԱՐԵՒԱՆԵՐ

(ԿԵՍՆՔԻ ԳԾԵՐ)

(Արտաստպած «ՄՈՒՐՃ» ամսագրից)

ԹԻՖԼԻՍ  
ՏՊՈՒԹՅՈՒՆ. Ա. Գ. ՌՈՏԵՆԵԱՆՑԻ

1891

699.  
891.993  
7-28

ՆԱՄԱԼԵԱՆ

և.ւ

# ՀԱՐԵՒԱՆԵՐ

(ԿԵԱՆՔԻ ԳԾԵՐ)



(Արտաստան «ՄՈՒԲՃ» ակադեմիայի ԱՆՈՒՅՆ)

1890  
1891  
1892

ԹԻՖԼԻՍ  
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԵՎԵՆՑԻ  
1890

3203

## ՀԱՐԵՒԱՆՆԵՐ

(ԿԵՍՆՔԻ ԳԾԵՐ)

I

Վեռնային բարձր արօտատեղում զարկւած էին  
երեք վրաններ: Դոքա բոլորը պատկանում էին Մահ-  
մուդ օղլի Սիւլեյմանին, որ ակր էր հազար հինգ  
հարիւր զլուկս ոչխարի և բռնել էր սարաւանդի  
մի մեծ տարածութիւն: Սիւլեյմանը ունէր երկու  
սրտոտ որդիներ, որոնցից մէկին արդէն պսակել էր,  
իսկ միւսն զեռ վարժեցնում էր ոչխարապահութեան  
մէջ, յանձնելով նորանց հովուի և հովիւների տեսչի  
պաշտօններ:

Ոչխարների կըթելու ժամն էր, ամենքը սաստիկ  
զբաղւած էին: Ոչխարներին մէկ-մէկ անց էին կաց-  
նում կթող հովիւների մօտ և բաց թողնում: Սիւ-  
լեյմանը ուշազրութեամբ դիտում էր ամեն մի ոչխարի  
մարմինը և բուրդը: Գառների հօտը ծանր-ծանր  
մօտենում էր հեռուից:

Կթելը վերջացաւ, ոչխարներին վոքր ինչ յետ  
տարան վրաններից և գառներին բաց թողին: Գառ-  
ները մկըկալով և բղաւելով վազեցին իրանց մացրերի  
մօտ:

Дозв. ценз. Тифлисъ. 20 Октября, 1890 г.

Типогр. М. Д. Ротиншанца, на Голов. пр. соб. д. № 41.

0681

Սիւլեյմանը, մուշտակը ուսերին գցած, դարձաւ  
իւր վրանը լուռ ու մունջ. նստեց վրանի առաջ  
ընկած քարի վերայ և պատրաստուեց ծխելու: Սարի  
դագաթից մինչեւ այդ ժամանակ փչում էր բարակ  
սառն քամի, որ սկսել էր մեղմանալ և այժմ հա-  
մարեա դագարել էր: Սիւլեյմանը գդակը յետ տարաւ  
իւր ճակատից. յետոյ մուշտակը կիսատ վայր գցեց  
իրանից և աջ ոտքը ծալեց ձախ ոտքի վերայ:

Սիւլեյմանի առաջ բացւած էր մեծ տեսարան:  
Նորա արօտատեղուն կտած էին հարևան զիւղացի-  
ների արտերը, նոցանից յետոյ երեւում էր զիւղի  
տների մի մասը և յետոյ տաճանեակ զիւղեր իրանց  
վարուցանքսով հետևում էին միմեանց—իսկ աւելի  
հեռուն պատած էր մի տեսակ մշուշով, որի միջից  
հաղիւ երեւում էին զիւղերը և նոցա շրջակացքը:  
Սիւլեյմանը նայում էր հորիզոնին. բաց ո՛չ շատ  
ուշադիր կերպով. կարծես նա մի մտած մունքի մէջ էր:

Այդ ժամանակ նորա՝ հովիւներից մէկը մօտի-  
կացաւ՝ բերելով հետը երկու կաղ ոչխար:

— Աղա՛, կաղացած ոչխարները դոքա՞ են:

— Հա, սոքա են, պատասխանեց քաշւելով  
հովիւր:

— Թող վրանի մօտ ու ինքդ գնա՛ գործիդ. լաւ  
մտիկ տւեկք ոչխարներին. տօ՛, շներին զարկող է՛ եղել:  
— Ոչ:

— Ինչպէս թէ ո՛չ, Ալաբաշը ինչ որ մի սոքը  
քաշում է. ես հօ կոյր չեմ... դէ գնա կորի՛ր:

— Ես չեմ իմացել:

Սիւլեյմանի մեծ որդին Բաղիրը՝ մի բարձրա-  
հասակ սիրունատես տղայ՝ ոչխարների մօտից եկել  
կանգնել էր հօր մօտը և լսում էր նորա խօսակցու-  
թիւնը հովիւ հետո: Նա լաւ դիտէր, թէ ինչո՞ւ  
է կաղում շունը, բայց գաղտնիքը կամաւ չը բացեց,  
այլ իւր կողմից էլ աւելացրեց.

— Դոքա չեն էլ նայում թէ շունը ոչխարների  
մօն է, թէ հեռացել է: Այս տարի մեր հովիւները  
շատ թուլասիրտ են. չեն կարողացել սահմանների  
խոտը ուտացնեն ոչխարներին: Երեւի շուտով կ'անցնեն  
պահոցքին, ոգորուխին:

— Տօ, որ աչքներդ էլ դուրս գայ, ես մինչեւ  
երեք շաբաթ թոյլ չեմ տալ որ մօտիկանաք պա-  
հոցքին, գոռաց Սիւլեյմանը: Ինչպէս կարող էք,  
կշացրեք ոչխարներին: Ուրիշ տարի ինչպէս ենք  
բաւականացել: Աչքաբաց եղէք:

## II

Հովիւն ճանապարհ զցելուց յետոյ Սիւլեյմանը  
դարձաւ իւր որդուն և աւելի մէջմ ձայնով շարու-  
նակեց.

— Այս տարի, Բաղիր, Աստծու վերայ գանգատի  
տեղիք չ'ունենք. ժամանակին անձրեներ տաւ, լաւ  
խոտ բուացրեց. տաւարն էլ ողջ և առողջ է: Ուրիշ  
տարի այս պահուն ինչքան գառն էինք կորցրած

լինում։ Այս տարի փառք Աստծու, ազատ ենք դժբաղութիւնից։

—Գառն մի փոքր կոսորւել է Հաջի Ալիի հոտում, բացի նորանից՝ էլ ոչ մէկը գանգատաւոր չէ։ խոտը այս տարի պատւական է։ մեր պահոցքը լաւ խոտահարք է դարձել, պատասխանեց Բաղիրը մի տեսակ պարծենկոտութեամբ և կոանալով գետնին՝ կտրեց մի երկու խոտ ու սկսեց նրանց քրքրել։

—Այս մեր հովիւները—խատակ էշեր են, տեսնում են, որ խոտը սկսում է պակսել։ էլ այն չէ որ սահմանի խոտը կերցնեն, որ յետոց մօտիկանանք դօրուխին—մի քիշ ուշ։

«Սահման, սահման ասելով՝ թափառականները իրանք հասկանում էին թէ ինչ են ասում։ Նոցա սահմանակիցները գիւղացիներն էին։ Ամենայն տարի Սիւլեյմանը կերցնում էր գիւղացիների արտերը իւր ոչխարներին։ Այս տարի խոտը առատ էր և հովիւները դեռ կարօտութիւն չէին զգացել մի այդ տեսակ քաղի, բայց Սիւլեյմանը մի տեսակ անհանգստութիւն էր զգում հովիւների այդ տեսակ թուլութիւնից։

—Այժմ այն էլ պէտք է ասել, որ գիւղացիները առաջւանից աւելի քաջացել են։ հանգստացրաւ հօրը Բաղիրը, մեզ հետ կուտում են, մեզ վերայ գանգատում են։ Թէ թողնենք մի տարի հանգիստ, ձայնները կտրւի... փառք Աստծու խոտ ունենք։

—Նոցա գանգատը անվերջ է։ որ աշխարհքն

էլ գորանց տաս՝ գոքա չեն կշամանալ։ Տես մէկ դոցա արտերը, փահ, փահ, փահ, ինչքան երկան փռւած են։ Այսր որ մի քանի սուփրա տեղ էլ մեզ համնի—ում վնաս կը լինի։ Բայ ես գիշեր-ցերեկ անձրեի, քամու տակ ապրեմ, —իմ աւգրանքը իմ անձովը պահեմ։ իսկ նա գայ դարնանը մի օր վարի ցանի ու զնայ՝ շաբաթներով ամի սներով տանը հանգիստ նատի՝ մինչև արել հասցնի։

Շները հաջեցին, խօսողները աչքները դարձրին դէպի շների կողմը և տեսան հեռուից ձիաւորների։

—Աշմաղն է չէ։ այն էլ Մեհտին։

—Այո, նոքա են, երկի տուն են վերագառնում։ նոցա կանչել էին զատարանը՝ սպանութեան դործի համար։

—Գիտեմ, գիտեմ։ տեսնենք ինչ լուրերով են զալիս։ —կանչիր, վեր զան, նատեն, շուրսուխ քաշեն։

### III

Զորս օր էր անցել այս խօսակցութիւններից յետոց։ Սիւլեյմանի որդիները և հովիւները վաղ առաւօտեան վերկացան և տեսան, որ թանձր մառախուղը պատել է լիսները և քամին տանում է մառախուղը դէպի գիւղերը։ Կարծես թէ զա մի ուրախացնող սիրտ տւող դէպք էր։ հովիւները սաստիկ աշխոյժով սկսեցին պատրաստել ոչխարներին արօտը քշելու։ հովիւներից մէկը մօտեցաւ ու շներին

տեղից շարժեց և նոցանից մէկին իւր մահակով բօթեց։ Առհասարակ, շները իրանք գիտէին իրանց պարտաւորութիւնները և նոցա զարթեցնող, դրգոռող չէր լինում ո՛չ ոք։ Այս օրւայ նոցա վերկացնելը— իմաց տւաւ շներին, որ մի ինչ որ նոր դործ կայ կատարելու և նոքա պէտք է պատրաստ լինեն։ Նոքա սկսեցին անհանգիստ նայել իրանց շուրջը, իսկ նոցանից մէկը սկսեց հաջել։

Բաղիրը չէր նկատել հովի արարքը։ Տեսնելով շներին լարւած դրութեան մէջ՝ նա զարմացաւ և բարկացաւ։

— Տօ, ինչ յիմարներն էք. շներին ինչո՞ւ էք կատաղեցրել։ Ես ասում էի, դորանց ամենեին հետներդ չը տանէք. զոքա իրանց հաջոցով ձեր բանը կը քանդեն, գիւղացիներին իմաց կը տան։

— Երկիւդ միք կրի՛լ, մառախուղը թանձր է, գիւղից տեսնող չի լինիլ. շունը զուր տեղը ինչո՞ւ է հաջում։ Իսկ եթէ բան է, մի գժբաղդութիւն պատահեց— շները հարկաւոր կը դան։

— Զէ, շները աւելորդ են, զլուխը թափահարելով ասաց Բաղիրը։

Շներին յետ տւին հօտից և յանձնեցին գառնարած հովիւներից մէկին։ Երկու հովիւ և Սիւլեցմանի փոքր որդին Ասալը առան իրանց հսկացական մահակները ու սկսեցին քշել ոչխարների հօտը գէպի գիւղի արտերը։

— Զգոյշ եղէք, կանչեց նոցա ետեկից Բաղիրը։

եթէ տեսաք, որ մառախուղը նոսրանում է, ետ քաշւեցէք գէպի մեր արօտը։ Ոչխարը չը ցրւէք, աչքներդ վերան պահեցէք, յետոց նոցա մի տեղ հաւաքելը դժւար կը լինի։ Ասա՛դ. մի փորձանք պատահելուց՝ շուտ իմաց կը տաս մեզ. ինքդ մի քիչ քեզ հեռու պահի՛ր։

Մեծ հովիւը շատ էլ ուրախ չէր այդ օրւայ իրանց անելիքին և մտատանջութեան մէջ էր ընկել։ Նորա կինը վատ երազ էր տեսել իւր մարդու մասին։ Բայց որ մի անդամ գուրս էր եկել այդ ճամապարհը՝ պէտք է քաջութեամբ առաջ գնար։ Դա մի երեսուն տարեկան միջահասակ ջլոտ տղամարդ էր, սեւայած երեսով ու կատաղի աչքերով։ Դա յացնի էր իբրև լաւ կուող. իբրև լաւ մահակ խաղացնող։ Եւ գորա ձեռքին եղած մահակը մի ահագին փայտ էր այնպիսի ծանր զլխով, որի հարւածը պէտք է իսկոյն ոչնչացնէր հակառակորդին։ Այդ մահակով մի անդամ նա խփել էր գալլի և նորան գետին տարածել։

Մառախուղը շարունակում էր։ Հօտը անցաւ Սիւլեցմանի արօտի սահմանը և ընկաւ գիւղի հողը։ Նրջակացքը լուռ էր. ձանի ծպտուն չը կար. Հովիւները ուրախացան և համարձակ կերպով քշեցին ոչխարներին արտերի մէջերը։ Ոչխարները ցրւեցին այս ու այն կողմը։ Մեծ հովիւը մոռացաւ երազը և վայրենի ժպիտը երեսին՝ կտնգ առաւ արտի եղերը։

— Աստուած ողորմած է. նա իւր արարած ոչ-

Խարի համար կերակուր կը գտնի, միայն իմ կուռը  
սաղ լինի, ես ոչխարի վերան լինեմ:

IV

Գիւղացիներից թագցւել չը կարողացան հո-  
վիւները իրանց ոչխարներով։ Գիւղացիներից մէկը  
ձարօտենց Վանէսը ուշք չէր գարձրել մառախուղի  
վերաց և յոյս ունենալով, որ սա շուտով կը ցրւի,  
գնացել էր խոտահարքի իրանց վերի արտի կողմերը։

Վանէսը նկատեց ոչխարներին իւր զբացի Մկրտչի  
արտում ու խոտահարքում՝ և իսկն ասած՝ մի  
բողէ ուրախացաւ, որովհետեւ Մկրտչի հետ թշնա-  
մացած էր։ Թշնամութեան պատճառը Մկրտիչն  
էր, որ գարնան իւր արտերը վարելուց՝ երկու ակօս  
անցել էր Վանէսի հողով և իւր ցանքսի մէջ գցել։  
Վանէսը շատ կռւել էր, շատ խօսել Մկրտչի հետ,  
բայց սա իւր վերաց չէր ընդունել մէզը։

Սակայն խիղճը Վանէսին տանջեց և միւնոյն  
ժամանակը նա մտաբերեց, որ իւր ցանքսը ու խոտը  
նոյնպէս շատ մօտ են ոչխարներից։ ուստի սկսեց  
խորհել հովիւներին բռնելու և պատճելու միջոցների  
մասին։ Նա ինքը միայնակ ոչինչ չէր կարող անել,  
հովիւները նորան ջարդուփշուր կ'անէին։ Նա տե-  
ղեկութիւն ունէր մեծ հովի կատաղի հարւածների  
ոցի մասին։ Նա վճռեց զողտուկ իջնել զիւղը և  
ացնաեղից առնել հետը մի քանի տղերը։

Գիւղացիները տիրեցին լսած լուրից։ Նոցանից  
իսկոցն մի եօթն հոգի ճանապարհ ընկան դէպի սարը։  
Մկրտիչը, որի ցանքսը ու խոտը վտանգի մէջ էին,  
տանը չէր գնացել էր ջուր կապելու ներքին արտի  
վերաց։ Նորա ետեկց մարդ ուղարկեցին։

Տղերքը առան իրանց հետ մահակներ։ իսկ  
նոցանից երկուսը կապեցին դաշոյններ։ Նոքա պայ-  
մանաւորւեցին աննկատելի կերպով մօտենալ հովիւ-  
ներին և նոցա յաղթել առանց երկայն կռւի։ Նոքա զի-  
աւէին, որ թէկ կռւի մէջ իրանք չեն զիջիլ հո-  
վիւներին, սակայն չէին ցանկանում պատճառ լինել  
սաստիկ ծեծի կամ գուցէ արիւնչեղութեան։

Թանձր մառախուղը պատել էր երկիրը։ Գիւղա-  
ցիները, մօտենալով Մկրտչի արտին, սկսեցին արտերի  
միջով կռացած, սողալով և չոքեչոք՝ մերձենալ հո-  
վիւներին։ Երկու տղայ բաւականին արդէն մօտեցել  
էին մեծ հովին և գնդղում էին նորան։

Հովիւը ոչ ոքի չէր սպասում։ թեք էր տւել աջ  
ոտքին և գաւազանը թոյլ կերպով բռնել էր ձեռ-  
քում։ Նա նայում էր իւր ձախ ձեռքի վերքերին։  
Յանկարծ տղերքը բռւսան նորա առաջին և խիցին  
ձեռքից մահակը։

— Մի վախենալ, դրացի, բարով ես եկել մէզ  
մօտ հիւր, կանչեց տղերքից մէկը։

Հովիւը չիմացաւ ինչ անի կամ պատասխանի,  
որովհետեւ միւս տղերքն էլ երեացին արտի միջից։ Նա  
ալլայլեց, յարձակւեց գիւղացու վերաց, որ մահակը

Խլի. բայց, տեսնելով հակառակ ոյժը, յետ քաշւեց:  
 —Մահակա, ինչո՞ւ ես խլում ձեռքից, ինչ  
 ասելու ես տաս:  
 —Ասելու շատ բան չունենք, գնանք մեր զիւղը  
 հիւր:

Միւս հովիւր, որ զեռ չէր տեսել առաջինի  
 զինաթափւելը, կորու սկսեց զիւղացիներից մէկի  
 հետ, մահակները տեղից շարժւեցին. զիւղացիները  
 օգնութեան եկան. մեծ հովիւր աղաղակում էր իւր  
 ընկերին, որ յետ քաշւի: Կորուր հանդարտւեց: Հո-  
 վիւր, տեսնելով իւր անզօրութիւնը՝ դիմեց խորա-  
 մանկութեան. քաղաքավարի և շողոքորթելով նկատւեց:  
 —Մառախուղ էր, ոչխարները չէին նկատել՝  
 անցել էին սահմանը. մենք էլ եկանք նորանց յետ  
 քշելու:

—Այդ յետոյ կը քննենք. Տիմա հայրէ գնանք  
 մեր զիւղը ձեր ոչխարն էլ հետներդ: Այնուղ հան-  
 գիստ հանդարտ խորհուրդ կանենք, նկատեցին սառն  
 կերպով զիւղացիները:

—Ոչխարները մեզք են, աղաշելով ինսդրեցին  
 հովիւները, թողնենք նորանց արածեն արօսում,  
 նոքա զիւղում ձեզ համար ծանր բեռ կը լինեն:

—Այ հանաքիներ, ի՞նչ բեռն կը լինէք.  
 ինչո՞ւ էք այդքան մեղ համար հոգում. ասենք թէ  
 հարեաններ էք, պէտք է հոգատար լինէիք:

—Ե՛հ, աղերք, լաւ չէք անում. ոյժը ձեր կողմն  
 է ինչ ասենք. ծիծաղեցէք:

—Դէհ, գնանք, գնանք, խօսելու ժամանակ  
 չունենք:

—Լաւ չէք անում, զիւղացիներ:  
 —Այդ յետոյ կը տեսնենք, դէհ աղերք, ոչխար-  
 ներին քշեցէք:

Հովիւները ստիպւած պէտք է զիջէին: Նոքա  
 գարձեալ փորձեցին յետ պահելու ոչխարը. բայց  
 զիւղացիները սկսեցին սպառնալիքներ կարգալ: Աղ-  
 մուկի վերայ մօտիկ արտերից հաւաքւեցին էլի մի  
 չորս զիւղացի, որնք, տեսնելով իրանց ջահիների  
 յիմարութիւնը՝ հարկաւ որ չը համարեցին խառնւել  
 գործին: Հովիւները դրանց զիմեցին իբրև միջնորդնե-  
 րի. բայց սոքա նախատելով ասացին:

—Ամօթ չէ ձեզ համար. գալիս էք գողունի  
 մեր խոտը կերցնում, մեր ցանքսը փշացնում և յետոյ  
 ուղում էք, որ ձեզ էլ մենք ներենք:

—Մի ուրիշ օր էլ կը պատահի մենք ձեզ հար-  
 կաւոր կը գանք:

Գիւղացիները արգէն սկսել էին քշել ոչխարնե-  
 րին զէսի զիւղը: Հովիւները զիսակոր հետևեցին  
 ոչխարներին:

Սիւլեյմանի փոքր որդին Սաադը, որ տեսնում  
 էր հեռուից այս բոլորը, վազեց տուն՝ շուտով յայտ-  
 նելու իւր հօրը եղելութեան մասին:

V

Գիւղում գղրդոց ընկաւ։ Ամեն կողմից ժողովեցին տեսնելու ոչխարի հօտի գերելլ։ Ամբողջ գիւղում այնքան ոչխար չը կար, որչափ Սիւլեյմանինն էր։ Ոչխարները քշեցին տանուտիրոջ կալատեղի մօտ շինած մեծ պարսպապառը և վերան դրին սպահապաններ։

Տանուտէրը տեսաւ, որ առանց գզիրի յայտարարութեան էլ մարդիկ հաւաքւել են իւր տան մօտ. ուստի վճռեց մի թեթև ժողով կազմել և խորհուրդ անել այս դէպքի մասին։

— Կանոնն այն է, սկսեց տանուտէրը, որ ուղարկենք զլսաւոր տանուտէրի, զլաւնու, ետևից ունորա ներկայութեամբ արձանագրութիւն կազմենք եղած վնասի և բողոր եղելութեան մասին։

Գիւղացիները խորհուրդ տւին փոքր ինչ սպասել, որովհետեւ Սիւլեյմանին տեսել են, որ նա գալիս է գիւղ։

— Սիւլեյմանը գայ, չը գայ—մեր ինչ գործն է, մէջ մտաւ կաղլիկ Մարտիրոսը, որ յայտնի էր գիւղում, իբրև ուղիղ խօսող և բողոքող մարդ։

— Տեսնենք, ի՞նչ է ասում։

— Ինչ ուզում է ասի, շարունակեց Մարտիրոսը. նա ի հարկէ կը ցանկանայ, որ մենք դարձնենք ոչխարները իրան և ով գիտէ դեռ իրան էլ մի որ և է ընծայ տանենք մեր կողմից։ Եթէ լաւ պատժելու

համար հարկաւոր է արձանագրութիւն, թող լինի անպատճառ արձանագրութիւն։

— Սպասի՛ր, Մարտիրոս, այդտեսակ սուր ու դիք բոնելով՝ բան չի դուրս գալ. տեսնենք առաջ ինչ ենք իմանում, կարելի է յետոյ աւելի խիստ բան ենք գործ դնում։

Գիւղացիները սկսեցին միմեանց հասկացնել այս կամ այն տեսակ վարմունքի նշանակութիւնը. խօսում էին երկու-երկու, խումբ-խումբ։ Առջմանակի մի մարդ կը զարմանար այդ աեսակ խօսակցութեան, այդ տեսակ ժողովի վերայ։ Ազմուկի լաւ ժամանակը հասաւ գիւղը Սիւլեյմանը։ Գիւղացիները սկսեցին հանդարտւել։ Ոիւլեյմանը մօտեցաւ տանուտէրին.

— Բարո՛վ, տանուտէ՛ր։

— Բարո՛վ, Սիւլեյման։

— Հովիւներս սխալել են, ասենք. մտել են գիւղի սահմանը, լաւ, դուք ի՞նչ էիք մտածում. միթէ հարեւանի հետ այսպէս կը վարւեն... ոչխարի տէր կայ թէ չէ. նա միթէ ձեզ մի բան արել է. ինձ ասացէք՝ ես ինքս կը պատճեմ հովիւներիս։

Սիւլեյմանը բարկացած մօտեցաւ իւր հովիւներին և բարձրաձայն աղաղակելով անթիւ ցիշոցներ տւաւ նորանց. զայրացած բոպէին բարձրացրաւ մլուրակը, որ իբր թէ վերայ բերի հովիւն. բայց գիւղացիները նորան հանդարտեցրին։ Տանուտէրը յետքաշեց նորան։

— Նստի՛ր, Սիւլեյման, նստի՛ր։

— Ինձ կը խայտառակեն այդ շները հարեւանութեան մէջ: Ի՞նչ օգուտ ունեմ դոցա ծառայութիւնից: Միանարիւն պղտորել գիտեն դոքա: Վարձները պէտք է կտրես, որ մի հասկանան դոքա:

Սիւլեյմանի բարկութիւնը անկեղծ էր. բայց նա բարկացած էր անյաջողութեան վերաց: Այդ բանը, թէե զիտէին գիւղացիները, անու ամենայնիւ՝ շատերը խաբւեցին նորա խօսակցութեան ձևից: Կաղիկ Մարտիրոսը, նկատելով գիւղացիների կաղելը, սրտումը բարկացաւ և զապելով իրան խօսեց.

— Սիւլեյման, թողնենք հովիւներիդ մի կողմ: Դու նոցա վերաց բարկանալու դեռ ժամանակ շատ ունես. մեք այստեղ գործ ունենք. եղբայր, սահման է դրւած մեր ու ձեր մէջ, պէտք է նա սուրբ պահպանւի. զանց առնողը պէտք է պատժւի:

— Փա՛հ, փա՛հ, փա՛հ, խնամի Մարտիրոս, ի՞նչ խօսում ես, հարեւանութեան մէջ այդ տեսակ կոպիտ խօսակցութիւն. մոռացե՞լ ես մեր անցեալ տարւայ զբոսանքը քո ձի գնելու ժամանակը:

— Ձեմ մոռացել, Սիւլեյման. շնորհակալ եմ, ես էլ քեզ համար նեղութիւն կը քաշեմ, երբ դէպք լինի. բայց այստեղ ուրիշ բան է, գիւղի գործ է, սահման ճանաչելու, ուրիշի սեպհականութիւն յարգելու գործ է:

— Մարտիրոս, աւելորդ խօսակցութիւն ես անում. ափսոս է ժամանակը: Տանուտէր, դու խելօք մարդ ես, բանը հաշտութիւնով վերջացնենք, ամեն

մարդ իւր գործին գնաց, պարապ մարդիկ չենք:

— Կանչենք մեծ տանուտէրին, դաց, գործը քննի, ինչպէս հարկաւորն է, խօսեց երիտասարդներից մէկը:

— Այս տարի, Սիւլեյման, ձեր խոտը առատ է. բայց դուք էլի ագահութիւն էք անում: Խոտը պահոցք էք արել ու մեր հողիցն էք ուզում օգտւել. անխիղմ էք, բարեկամ, անխիղմ, խօսեց մի ուրիշ երիտասարդ:

— Ի՞նչ անեմ, քաջե՛ր, ինձ նեղ օրն էք նախատում, իմ հովիւները իմ երեսը սւացրել են... ես ձեզ ինչպէս հասկացնեմ, որ ինքս էլ անբաւական ևմ եղածից: Բայց փառք Աստծու, ձեզ մի վեաս չի հասել, մի քանի շահու վեաս հասած լինի, ըլլինի՝ այդ է էլի... նոր միայն հօտը վրանիս մօտից հեռացաւ:

— Վնասը այդ յետոյ կ'իմանանք. քեզ հետ միասին կը գնանք՝ վեասը կը հաշւենք: Այդ վեասից դուրս տուգանքի մասին է խօսքը, խօսեց կարձահասակ մի դիւղացի:

— Այդպէս, ուրիմն: Դուք ուզում էք դէպքից օգուտ քաղել ուրիշմն, հասկացաց: Տանուտէ՛ր, ի՞նչ կ'ասես, լոել ես. սա ի՞նչ է նշանակում. եղբայր, վեասից դուրս էլ դուք խօսակցութիւն ունէք: Ամօթ չէ:

— Զէ, ամօթ չէ, մէջ մոռալ կաղիկ Մարտիրոսը, կարելի է դու չես հասկանում, Սիւլեյման բ-է-զ, ես քեզ հասկացնեմ:

— Զեմ ուղում, աւելորդ է, մըթմըթաց Սիւլեյմանը:

— Ես ինքս եմ ուղում և կ'ասեմ: Ես քեզ ասում եմ, մեր սահմանը պէտք է յարդես, սահմանից չ'անցնես. զու անցել ես, ուրեմն՝ պէտք է պատիժը կրես, այդ սահման չը ճանաւելու պատիժը. իսկ եղած վնասը՝ այդ էլ իւր կարգով:

Տանուաէրը, որ թոյլ էր տւել ցանկացողներին խօսելու, այժմ ինքը դարձաւ Սիւլեյմանին:

— Սիւլեյման, ի՞նչ ես ասում. ինքդ էլ նկատում ես, որ արդարանալու տեղ չունես. պէտք է գիւղին բաւականութիւն տաս:

— Հա, կարգին ես խօսում, տանուաէր, սիսալը արւած է. ես էլ շատ ցաւում եմ. բայց ինձ ձեր այստեղ բերելը, այսքան նախատինք ուտեցնելը՝ շատ թանգ նստեց. միթէ՞ աւելի բան էլ էք ցանկանում: Թանգ հազար մանէթ կը տայի այս օրւայ ձեր ինձ Ես հազար մասաւոր միթէ թքելը չը տեսնելու համար: Հասակաւոր, միթքեաց թքելը չը տեսնելու համար: Հասակաւոր, միթքեաց մարդ եմ, ժողովրդի մէջ անուն ունեմ, բուքաւոր մարդ եմ, ժողովրդի մէջ անուն ունեմ, բիրկ իբրև մի յետ ընկած ծառայի: Քացի տւեդուք ինձ իբրև մի յետ ընկած ծառայի: Քացի տւեդուք ինձ գողի, աւաղակի հետ հաւասարացրէիք, զեռ էլի բաւական չ'էք. զէհ, վեր առէք մտրակը, մի երկու էլ մէջքիս հասցրէք, ի՞նչ էք կանգնել:

Սիւլեյմանի խօսակցութիւնը ազդեց գիւղացիների վերայ:

— Տես, անիրաւը, ի՞նչ լեզու բանեցրեց, փսփսցին նոքա միմեանց ականցին:

— Սիւլեյման, գիտես, ասաց տանուաէրը, որ սա առաջին անգամը չէ. անցեալ տարի էլ երեք գէպք ենք ունեցել հետզ. թէեւ ոչ այսպէս մեծ և ախներւ: Այն ժամանակն էլ մի կերպ գործը անցկացրինք: Սորան վերջ պէտք է՞ թէ ո՛չ: Ես ինչպէս զսպեմ զիւղի ձացնը, նորա բողոքը. ի՞նչ պատասխանեմ:

— Մի անգամ լաւ պատժենք, մի լաւ տուգանք առնենք. յետոց էլ եկող չի լինիլ, կորական ասաց Մարտիրոսը:

— Ի՞նչ կայ, մեծ ոչխարատէր ես, մի քսան ոչխարից որ զրկես, ի՞նչդ կը պակսի. բայց հովիւներդ կը տեսնեն քո վնասը ու կը խրատւին:

Գիւղացիները ծիծաղեցին և սկսեցին աղմկալի խօսել: Վնասաւած արտի տէրը, Մկրտիչը, վաղուց եկել էր և լսում էր խօսակցութիւնները: Սիւլեյմանը նորան աչքով արւա, որ իրան մօտենաց: Մկրտիչը մօտեցաւ և Սիւլեյմանի վերայ նացեց մի նախատական հայեացքով:

Սիւլեյմանը սկսեց քչփշալ, սակարկութեան մէջ մանել. էլ հարևանութիւն, էլ վաղուցւայ ծանօթութիւն, էլ ապագայում կատարւելիք օգնութիւններ— էլ խօսուում չը մնաց, որ չ'արւաւ նորան: Մկրտիչը լսեց, լսեց և համաձայնեց բաւականանալ մի ոչխարով:

Սիւլեյմանը ինդրեց տանուաէրից, որ լոեցնի ժողովականներին և իրան խօսք տայ: Տանուաէրը

Հրաւիրեց զիւղացիների ուշադրութիւնը. Սիւլեյմանը խօսեց.

— Հարևաններ, դուք ինձ այսօր շատ խիստ պատժեցիք. այսպէս նախատինք կեանքումն կերած չը կացի. սա ես շուտով մոռանալ չեմ կարող և իմ սրտումն դաղը կը մնայ մինչև կեանքիս վերջը: Բայց ես ձեզ վերաց լաւ կարծիքի եմ, ձեր սիրաը սատանացի սիրտ չեմ համարում, այլ աղամորդու. ինչիլի (աւետարանի) հպատակողներ էք... ինձ այս անգամ կը բաշխէք, ինձ ոտի տակ միք տալ. իմ նամուսս գետին միք գցիլ, ինձ հանդիսա բաց թողէք: Ինչ վերաբերում է վնասին, ես հարևանիս ջանին մասաղ. ի՞ներում ինձ, ես էլ քրոյինքիցս նորան բաժին եմ հանում. բան չը կայ ուրիշ չէ, հարևանս է, թող նա օգտուի իմ ապրանքիցը:

— Ի՞նչպէս էք հաշտուել, դուացին ամեն կողմից.

— Այդ աւելորդ խօսքեր են, վերաց բերաւ Սիւլեյմանը, մի կոպէկ, թէ հազար կոպէկ՝ դա ինչ ձեր բանն է, Մկրտիչը ինձ ինչքան կարողացաւ՝ նեղեց:

— Եզրա՛յր, ես ինչպէս տեսնում եմ, մէջ մտաւ դարձեալ Մարտիրոսը, մեք մեղ ու մեղ ոչինչ չենք կարողանալու վճռել. ողարկենք մէծ տանուտէրի, դլավեռ ետեւից. նա կը դայ ու ամեն բան կը կարգադրի:

— Մարտիրո՛ս, պատասխանեց դառնութեամբ Սիւլեյմանը, ես ասածներդ մոռանում եմ. ուրիշը

քէն կը պահէր... հանկացողը կը հասկանայ: Ես քեզ հետ թշնամութիւն անողը չեմ:

Սիւլեյմանը տանուտէրի ականջին էլ փափաց: Գիւղացիները արդէն յոզնել էին խօսակցութիւնից. նոքա համաձայնեցին բաց թողնել ոչխարները և հովիւներին: Մկրտիչը գնաց իւր բաժինը ստանալու:


— Ե՛ս, մեր բաները միշտ այսպէս են, ծնններին խիելով մըրմընջաց Մարտիրոսը. այսպէս լաւ դէպքից էլ որ օգուտ չենք քաղում պատժելու, էլ ինչ գանգատուելու տեղիք ունենք:

Սիւլեյմանը հովիւներին ճանապարհ զցեց սարլ. ինքը նատեց իւր ձին, մի քանի կասաղի հարւածներ տւաւ ձիուն մարտկով և սլացաւ դէպի սարլ:

— Այս ոչխարը, մըրթմըրթաց նա, ստամները կրծացնելով, ձեզ վերաց աժան չի նատիլ. աեսնենք թէ ում ձին կը կորչի այս անիծւած դիւղից. ա՛յ թէ դէպքը այնպէս բերի, որ կաղլիկ Մարտիրոսի նոր գնած ձին ընկնի...



A circular library stamp from the "LIBRARY OF THE UNIVERSITY OF TORONTO" with a decorative border. The text inside the circle reads "7/17/1922" at the top, "BURNETT" in the center, and "THE LIBRARY OF THE UNIVERSITY OF TORONTO" around the bottom edge.



Վաճառւում է Թիֆլիսի Հայ գրավաճառանոցներում  
և «Մուրձ»-ի խմբագրատանը:

2013

14550

